ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌԸ ԵՎ ՈՒՐԱՐՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատմ. գիտ. դոկտոր Ն. Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիկողայոս Մառը ուրարտական սեպագրերի առաջին ուսումնասիրողներից է։ Գիտության այդ բնագավառին նա նվիրել է զգալի ջանքեր և ժամանակ։ Հայտնի են Ն. Մառի թվով 9 հետազոտություններ՝ նվիրված ուրարտական արձանագրությունների վերծանությանը և մեկնաբանությանը։ Նրա ուրարտագիտական աշխատությունները շահեկան շատ կողմեր ունեն, սակայն նրանց մեջ, կարծում ենք, առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Սարգուրյան տարեգրության[1], ինչպես նաև ուրարտական վիմագիր այլ արձանագրությունների տեղանունների և ցեղանունների ուսումնասիրությունը, նրանց համադրությունը հետագա շրջանի անտիկ և վաղ հայկական զուգահեռների հետ։ Գիտնականի առաջարկած ուրարտա-բյուզանդական և ուրարտա-հայկական տեղանունների ընդհանրությունները մի-մի հենակետ են դարձել ուրարտական տոպոնիմիկայի հետագա զարգացման ճանապարհին, նպաստել մի ամբողջ շարք այլ ցեղերի պատկանող տարածքների տեղորոշմանը։

Ն. Մառի ուրարտագիտական աշխատություններից մեզ բաժանում է պատկառելի ժամանակահատված, որի ընթացքում հսկայական նոր նյութ է կուտակվել և չնայած դրան, նույնիսկ բավական սուղ նյութի հիման վրա նրա արած որոշ եզրահանգումներ այսօր էլ պահպանել են իրենց արժեքը։

Հայտնի է, օրինակ, որ ուրարտական սեպագրերում և՛ անձնանունները, և՛ ցեղանունները հանդես են գալիս միևնույն դետերմինատիվով (որոշիչով)՝ ուղղագրության սեպով, դրա համար էլ նրանք երբեմն շփոթության տեղիք են տալիս։ Այդպիսին են եղել մինչև վերջերս Սարգուրյան տարեգրության Աբիանիի, Իրկուաինիի և Ուերդաինիի մեկնաբանության կապակցությամբ տեղ գտած թյուրիմացությունները։

Ժամանակին Ն. Մառը միանգամայն ճիշտ նկատել է, որ Սարգուրյան տարեգրության համապատասխան հատվածում վերոհիշյալ հատուկ անունները անձնանուններ են կամ կառավարիչների անուններ, որոնց իրավասությանը համապատասխանաբար ենթարկվել են Էդիանի, Իրույանի և Իրդուանի արքայական քաղաքները (URU LUGĂL-nusi)[2]։

Սակայն հետագա հետազոտողները, որպես կանոն, Աբիանին, Իրկուաինին և Ուերդաինին սխալմամբ համարել են ցեղանուններ և նույնիսկ նրանցից Իրկուաինին, սոսկ արտաքին որոշ նմանության հիման վրա, նույնացրել ուրարտական այլ արձանագրությունների Իրեկուախի-Էրիկուախի ցեղանվան հետ երնրանվան հետ[3]։ Իսկ սույն հոդվածի հեղինակը, իր վաղ շրջանի աշխատություններում, Աբիանին, Իրկուաինին և Ուերդաինին կրկին ցեղանուններ դիտելով հանդերձ, սոսկ կասկածանքով է վերաբերվել Իրկուաինի-Իրեկուախի համադրությանը, ուշադրություն հրավիրելով այն ակնառու փաստի վրա, որ Իրկուաինիի արքայական քաղաքը հանդիսացել է Իրույանին, իսկ Իրեկուախիինը՝ Լուխիունին[4]։

---

1 Տե՛ս Н. Марр и И. Орбели. Археологическая экспедиция 1916 года в Ван. Петербург, 1922.

2 Նույն տեղում, էջ 43։

3 Տե՛ս Г. А. Меликишвили. УКН, с. 274—275, 415, 431, 444.

4 Տե՛ս Н. В. Арутюнян. Биайнили (Урарту). Ереван, 1970, с. 248 и прим. 251.

Հետագայում հայտնաբերված ուրարտական գրավոր աղբյուրները և նրանց հետազոտությունը միանգամայն հիմնավորված դարձրին Ն. Մառի վերոհիշյալ մեկնաբանությունը։ Այժմ արդեն կասկածից վեր է, որ Սարդուրյան տարեգրության Աբիանին, Իրկուաինին և Ուերդաինին ոչ թե ցեղանուններ են, այլ անձնանուններ, որ այդ տարեգրության մեջ հետաքրքրող հատվածում իսպաս բացակայում են ցեղանունները կամ երկրանունները և միայն առկա են նրանց արքաների՝ Աբիանիի, Իրկուաինիի և Ուերդաինիի անունները, որոնց համապատասխանաբար պատկանել են Էդիանի, Իրույանի և Իրդուանի արքայանիստ քաղաքները։ Միաժամանակ պարզվել է, որ այդ քաղաքներից Իրդուան հանդիսացել է Արգիշտի II-ի Սիսիանի նոր արձանագրության Ծուլուկու երկրի (նույնական է «Աշխարհացույց»-ի Ծղուկի հետ) արքայանիստ քաղաքը և որ Ուերդաինին էլ այդ երկրի արքան է եղել Սարդուրի II-ի թագավորության օրոք (մ. թ. ա. 764—735 թթ.)։ Իսկ Սիսիանի նոր արձանագրության մեջ, որի կազմող Արգիշտի II-ը (մ. թ. ա. 713—685 թթ.) արդեն Սարդուրի II-ի թոռն է, Ծուլուկու երկիրը, բնականաբար, այլ արքա ունի՝ Զաղինու անվամբ[5]։

Ի դեպ, վերոհիշյալ փաստերի լույսի տակ բավական խոսուն է դառնում նաև Սարդուրյան տարեգրության հենց այն հաղորդումը, որ եթե Աբիանի, Իրկուաինի և Ուերդաինի արքաները (հիշենք, որ վերջինս Ծուլուկու երկրի արքան էր) հպատակեցվում են համառ մարտերի ընթացքում, ապա Պուինի(ալխի) քաղաքի արքան (LUGÁL-ni URUPuiniaiṇi) պարզապես անձնատուր է լինում և հարկատու դառնում ուրարտական թագավորին խաղաղ ճանապարհով։

Մի խոսքով, երկար որոնումներից հետո ուրարտագիտությունը ստիպված է եղել վերադառնալու Ն. Մառի եզրահանգմանը և Սարդուրյան տարեգրության Աբիանին, Իրկուաինին, Ուերդաինին վտարելու տեղանունների ու ցեղանունների անվանացանկերից և նրանց կայուն տեղ հատկացնելու անձնանունների, այսինքն՝ Ուրարտուին հպատակ մարզերի կառավարիչների ցուցակներում։

Այնուհետև, Ն. Մառը միանգամայն ճիշտ է կռահել, որ Սարդուրյան տարեգրության և սեպագիր այլ աղբյուրների Ուդուրի-էթիունին ըստ ամենայնի տարբեր է էթիունի աշխարհագրական միավորից[6]։ Եվ, իսկապես, այժմ արդեն բացահայտված է, որ էթիունի ցեղային մեծ միության լայնատարած տերիտորիան արևմուտքից արևելք ձգվել է, մի կողմից, Սարիղամիշից մինչև Սևանա լճին արևմուտքից հարող տարածքները, մյուս կողմից՝ մինչև Արովյանի շրջանը (Ուլուանի երկիրը) և Սիսիանի շրջանը (Ծուլուկու երկիրը)։ Իսկ հարավից հյուսիս էթիունյան ցեղային միությունը, ըստ երևույթին, տարածվել է Արաքսի միջին հոսանքից (Ախուրյանի հետ նրա խառնման շրջանից) մինչև Զըլդըր լիճը։ Ինչ վերաբերում է Ուդուրի-էթիունի ցեղային միությանը, ապա այն, իր Արկուկինի, Կամանիու, Լուերունիու և այլ ցեղերով, տեղադրվում է Սևանա լճի ավազանում և հարակից տարածքներում։

Ի դեպ, էթիունի և Ուդուրի-էթիունի հավաքական աշխարհագրական միավորների անվանական կապը, ըստ երևույթին, բոլորովին էլ պատահական չպետք է համարել։ Հենց Ուդուրի-էթիունիի գրելաձևը ուրարտական սեպագրերում (IUduri KUREtiuni) հավանաբար վկայում է, որ ի տարբերություն էթիունյան այլ ցեղերի, տվյալ դեպքում մենք գործ ունենք ցեղային այդ միության հենց Ուդուրի ցեղի հետ։ Ուստի շատ հավանական է, որ Ուդուրի-էթիունին եղած լինի էթիունյան ցեղային միության տարածման ավելի ուշ

---

[5] Այս ամենի մասին մանրամասն տե՛ս Н. В. Арутюнян. Заметки по урартской эпиграфике.—Древний Восток и мировая культура. М., 1981, с. 76–79; N. V. Harutiounian. La nouvelle inscription ourartéenne decouverte en Arménie Sovietique.—Schriften zur Geschichte und Kultur des alten Orients, 15, Berlin, 1982, S. 93.

[6] Տե՛ս Н. Марр и И. Орбели. Указ. соч., с. 45.

շրջանի արեալը։ Հենց դրանով էլ երևի պետք է բացատրել նրանց հարևանությունը տերիտորիալ տեսակետից[7]։

Ակադեմիկոս Մառի Ուրարտուի տոպոնիմիկային վերաբերող հաջորդ հայտնագործությունն այն է, որ նա է առաջինը նկատել Qumaḫa-ḫali և Qumaḫa-alḫi հորջորջումների նույնությունը, ինչպես նաև դրանց ընկալումը որպես «կումախցիներ»։ Մյուս կողմից, Մառը միանգամայն ճիշտ է մեկնաբանել, որ ուրարտական սեպագրի Qumaḫa-ն նույնական է անտիկ աղբյուրների Κομμαγηνή-ի հետ։

Բացի հիշյալ հանգամանքներից, Ն. Մառը միաժամանակ հանգել է համոզիչ եզրակացության այն մասին, որ Սարդուրյան տարեգրության Qumaḫa-ի և ասորեստանյան սեպագրերի Kum(m)uḫ-ի տակ ենթադրվում է միևնույն երկիրը, ըստ որում, բնականաբար, համընկնում են նաև նրանցում հիշատակված թագավորների անունները՝ Կուշտաշպիլին Սարդուրյան[8] և Կուշտաշպին՝ Թիգլաթպալասար III-ի[9] տարեգրություններում։

Ինչ վերաբերում է Qumaḫa-Kum(m)uḫ(ḫu)-Κομμαγηνή-ի տեղորոշմանը, ապա հինարևելյան տոպոնիմիկայի ուսումնասիրության ժամանակակից մակարդակը հնարավոր է դարձնում այն տեղագրել անդրեփրատյան տարածքում՝ Խաթե, Մելիդու-Մելիտեա (այժմյան Մալաթիա), Գուրգում (ասորեստանյան սեպագրերի Marqasu, այժմյան Մարաշ կենտրոնով) երկրների հարևանությամբ։

Qumaḫa-Kum(m)uḫ-Κομμαγηνή-ի տեղադրման համար անգնահատելի կարևան են ծառայում նաև հետևյալ փաստերը. հիշյալ երկրի ուրարտական և ասորեստանյան սեպագրերում հանդիպող Խալպա կամ Խալպու քաղաքը (բնակատեղին) համապատասխանում է այժմյան Խալֆետին, իսկ Կիշտանը՝ ժամանակակից Կյուշտեմին։ Դրանք երկուսն էլ ընկած են Եփրատի ափին, ըստ որում Կիշտանը՝ արևմտյան ափին (Մերզումենի գետաբերանի մոտ), իսկ Խալֆետին՝ արևելյան (Բիրեջիկից հյուսիս-արևմուտք)։ Այս վերջին փաստը վկայում է այն մասին, որ Qumaḫa-Κομμαγηνή-ի որոշ արևելյան տարածքներ, ակներևաբար, ընկած են եղել Եփրատի հանդիպակաց՝ ձախ ափին՝ առնթեր շրջաններում[10]։

Նիկողայոս Մառը ճիշտ է կռահել նաև Սարդուրյան տարեգրության Qulḫa և անտիկ աղբյուրների Κολχοι-ի, այսինքն՝ «կոլխերի» նույնությունը[11]։

Ուրարտուի տոպոնիմիկայի հետագա ուսումնասիրությունը համակողմանի հաստատեց Մառի առաջարկած այս համադրությունը ևս։ Հայտնի է, որ Սարդուրյան տարեգրության հատվածներից մեկում Կուլխան հիշատակվում է Խուշալխի (resp. Խուշանի) գավառի հետ, իսկ վերջինս Խորխորյան տարեգրության մեջ, որպես կանոն, հանդես է գալիս Դիաուխի (ասորեստանյան՝ Դայաեենի, պատմական՝ Տայք), Տարիունի (պատմական Դարոյնք), Զաբախա (պատմական Ջաւախք) երկրների հետ[12]։ Իսկ Սարդուրյան տարեգրության մի այլ հատվածի համաձայն, Կուլխա երկրի արքայական քաղաքը հանդիսացել է

---

[7] Տե՛ս Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 198—199, 262—263.

[8] Տե՛ս Н. Марр и И. Орбели. Указ. соч., с. 32, 49—50, 52—53.

[9] Տե՛ս P. Rost. Keilschrifttexte Tiglat-Pilesers III. Band I, Leipzig, 1893, S. 12—13, Z. 61—62, S. 14—15, Z. 86.

[10] Qumaḫa-Kum(m)uḫ(ḫu)-Κομμαγηνή երկրի տեղադրման մասին մանրամասն տե՛ս Н. В. Арутюнян. Топонимика Урарту, с. 122—123.

[11] Н. Марр и И. Орбели. Указ. соч., с. 52—53.

[12] Տե՛ս Г. А. Мелкишвили. УКН, 127, I, стк. 6—9, 128B1, стк. 2—4.

Ելդամուշան, որը մասնագիտական դրականության մեջ վաղուց նույնացվել է Արտանուշի (այժմյան Ադակալեի) հետ, որն ընկած է Ճորոխի ստորին հոսանքում, այսինքն՝ ուրարտական դարաշրջանի Կատարղա մարզի (պատմական Կղարջքի) տերիտորիայում։ Այս վերջին փաստը, ըստ երևույթին, վկայում է այն մասին, որ Սարդուրի II-ի թագավորության օրոք Կատարղան արդեն պետք է եղած լիներ Կուլխայի կազմում, քանի որ Արգիշտի I-ից (այսինքն՝ Սարդուրի II-ի հորից) հետո Կատարղան ուրարտական սեպագիր աղբյուրներում այլևս չի հիշատակվում։ Նույնը կարելի է ասել նաև Դիաուխի-Տայքի մասին, որը ժամանակին Կուլխային հարևան երկիր էր, սակայն Արգիշտի I-ի թագավորությունից հետո ուրարտական աղբյուրներում դարձյալ չի հանդիպում։

Այսպիսով, ելնելով վերոհիշյալ տվյալներից, ուրարտագիտությունը այժմ լիովին արդարացի է համարում Ն. Մառի եզրահանգումը, և Սարդուրյան տարեգրության Qulha-ն նույնացնում է անտիկ աղբյուրների Κολχις-ի, վաղ հայկական Կողքիսի, վրացական Կոլխեթիի հետ և տեղադրում այն Սև ծովի հարավ-արևելյան անկյան մոտ։

Ուրարտուի տոպոնիմիկայի ուսումնասիրության բնագավառում ակադեմիկոս Մառի հաջորդ կարևոր նորամուծությունը Սարդուրյան և Խորխորյան տարեգրությունների Abiliani-ի և վաղ հայկական Աբեղեանքի նույնացումն է[13], ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գր. Ղափանցյանը իր աշխատություններից մեկում հատուկ ընդգծում է, որ այս կարևոր եզրահանգումը պատկանում է Ն. Մառին և ոչ միայն հավանություն է տալիս, այլև աշխատում լրացուցիչ փաստերով հիմնավորել այն[14]։ Եվ իսկապես, ուրարտական սեպագիր աբյուրների մատուցած նյութերը բազում ապացույցներ են պարունակում Ն. Մառի առաջարկած Abiliani-Աբեղեանք համադրությունը հաստատելու համար։ Ճիշտ է, Աբիլիանին առաջին անգամ հիշատակվում է դեռևս վաղօրոք գիտությանը հայտնի Խորխորյան տարեգրության մեջ, սակայն այդ միակ հիշատակությունը առկա է այսպես կոչված «վերնագրային դեկլարացիայում», որում կողք-կողքի հիշատակված երկրները սովորաբար պատկանում են տվյալ տարում ձեռնարկված տարբեր արշավանքների ու երթուղիների։ Հետևաբար, «վերնագրային դեկլարացիայի» տվյալների հիման վրա ամենևին էլ հնարավոր չէ տալ ուրարտական դարաշրջանի գավառների, այդ թվում Աբիլիանիի, տեղորոշումը։ Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ Abiliani-Արեղեանք համադրությունը Ն. Մառը առաջարկել է Սարդուրյան տարեգրության շատ ավելի հարուստ տվյալների հիման վրա։ Այստեղ արժե նկատի ունենալ, որ Abiliani երկրանվան կամ ցեղանվան[15] ընդամենը վեց հիշատակություններից հինգը հանդիպում է Սարդուրյան տարեգրության մեջ։

Աբիլիանիի տեղադրման մասին Սարդուրյան տարեգրությունը բավական կոնկրետ տվյալներ է պարունակում, որոնց համաձայն, ուրարտական զորքերը մի անգամ մխրճվել են Արիլիանիի սահմանները Էրիախիից վերադարձի (bidujaše) ճանապարհին։ Մյուս կողմից հայտնի է, որ Էրիախի երկրի (ցեղի) նվաճման մասին պատմում է Արգիշտի I-ի Ղանլիշայի (այժմյան Մարմաշենի) ժայռափոր արձանագրությունը, որը գտնվում է Արփաչայ-Ախուրյանի ձախ ափին, Լենինականից մի քանի կմ հեռավորության վրա։ Ասվածից հետևում է, որ Էրիախի գավառի տերիտորիան պետք է որոնել Լենինականի շրջանում և հարակից տարածքներում, իսկ Աբիլիանին՝ նրանից հարավ, քանի որ, ինչպես հայտնի է, իրենց արշավանքներից մեկի ժամանակ ուրարտացի-

---

13 Н. Марр и И. Орбели. Указ. соч., с. 59.

14 Տե՛ս Гр. Капанцян. Историко-лингвистическое значение топонимики древней Армении. Ереван, 1940, с. 5.

15 Abiliani-ն ուրարտական վիմագրերում հավասարապես հանդես է գալիս ինչպես երկրանվան, այնպես էլ ցեղանվան դետերմինատիվներով։

ները Աբիլիանիի տերիտորիայում երևացել են Էրիախիից հայրենիք վերադառնալու ճանապարհին։

Աբիլիանի երկրի կամ ցեղի զբաղեցրած տերիտորիան որոշելու համար, մյուս կողմից, ուշադրության արժանի են Սարդուրյան տարեգրության մի այլ հատվածի տվյալները, որոնցում Աբիլիանին հիշատակվում է Աբունի երկրանվան հետ։ Իսկ վերջինս, ինչպես հայտնի է, նույնացվում է վաղ հայկական Հանունիքի հետ[16], որի տերիտորիան ընկած է եղել Աբիլիանի-Աբեղեանքից հարավ-արևմուտք, Արաքսի հանդիպակաց՝ հարավային ափին։

Հետևաբար, վերը բերված փաստական նյութից միանգամայն ակներև է դառնում Ն. Մառի տեսակետի իրավացիությունը այն մասին, որ ուրարտական սեպագիր աղբյուրների Abiliani-ն իսկապես վաղ հայկական Աբեղեանքն նախատիպն է, ընկած է եղել Արաքսի վերին հոսանքում, նրա ձախափնյա հատվածում, Ախուրյանի խառնարանից արևմուտք։

Արժե երկու խոսք ասել Ուրարտուի տոպոնիմիկայի վերաբերյալ Ն. Մառի մի այլ առաջարկության մասին ևս, որն առնչվում է սեպագիր աղբյուրների Anaše քաղաքի (բնակատեղիի) և ուշ շրջանի (նաև ներկայիս) Ալաշկերտի համադրության հետ։

Անաշեն ուրարտական սեպագիր աղբյուրներում հանդիպում է Իշպուինիի և Մենուայի կողմից համատեղ կազմված երեք արձանագրություններում, որոնք հայտնաբերվել են Վանի Սուրբ Պողոս եկեղեցու պատի արվածքում, Վանից հյուսիս ընկած Հյուսենենց գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցում և Ալաշկերտում, որը գտնվում է Արածանիի վերին հոսանքում, նրա Շարյան-սու վրտակից հյուսիս, այժմյան Կարաքյոսեից (նախկին Աղրիից) հյուսիս-արևմուտք։ Ի դեպ, Անաշե քաղաքը հիշատակող այդ արձանագրություններում սովորաբար պատմվում է ուրարտացիների կողմից Ուիտերուխի, Լուշա և Կատարզա երկրների նվաճման մասին[17]։ Նշենք, որ Անաշեի տեղադրման համար առաջնակարգ նշանակություն ունեն Ալաշկերտում հայտնաբերված սեպագիր տվյալները, որոնց համաձայն, ուրարտական թագավորներ Իշպուինին և Մենուան մ. թ. ա. IX դարի վերջին արձանագրություն են կանգնեցրել Անաշեքաղաքում (seirli DUB-te URUAnašie)։ Այստեղ նույնքան կարևոր է նաև տվյալ արձանագրության հայտնաբերման փաստը հենց Ալաշկերտում։

Հիշյալ երկու կարևորագույն հանգամանքները Ալաշկերտի արձանագրության հրատարակչին՝ Ն. Մառին իրավացիորեն հանգեցրել են այն համոզիչ կարծիքին, որ ուրարտական սեպագրի Անաշեի մեջ, ըստ երևույթին, կարելի է տեսնել ժամանակակից Ալաշկերտի նախատիպը[18]։

Անաշե-Ալաշկերտ համադրությունը հետագայում ընդունել են շատ ուրարտագետներ՝ Կ. Ֆ. Լեման-Հաուպտը[19], Գ. Մելիքիշվիլին[20], Ի. Դյակոնովը[21] և ուրիշներ։

Անաշե-Ալաշկերտ նույնացումը միաժամանակ անհրաժեշտ կռվան է հանդիսանում ուրարտական արձանագրությունների Ուիտերուխի գավառի տեղադրման, մասնավորապես նրա հարավային սահմանների ճշտման համար։

---

16 Տե՛ս Н. В. Арутюнян. Биайнили (Урарту), с. 399—402.

17 Տե՛ս Г. А. Меликишвили. УКН, 20, 21, 23; F. W. König. Handbuch der chaldischen Inschriften. Teil I, Graz, 1955 (տեքստեր 6, 6a, 6b).

18 Տե՛ս Н. Марр. Фрагмент халдской надписи из Алашкерта.—Известия РАИМК, I, № 8, 1920, с. 56—57.

19 Տե՛ս C. F. Lehmann-Haupt. Corpus Inscriptionum Chaldicarum (տեքստ 28 և 4-րդ տողի առթիվ բերված ծանոթագրությունը).

20 Տե՛ս Г. А. Меликишвили. УКН, № 23 и ук. имен, с. 417.

21 I. M. Diakonoff, S. M. Kashkai. Geographical Names According to Urartian Texts. Wiesbaden, 1981, p. 8.

Փաստերը վկայում են, որ հենց այդ գավառի տերիտորիալ սահմաններում էլ, ավելի ճիշտ նրա հարավային եզերքին, ընկած է եղել Անաշե-Ալաշկերտը։

Ավելի քան մեկ հարյուրամյակ է անցել ուրարտական սեպագիր արձանագրությունների առաջին վերծանություններից ու հրատարակություններից։ Համարյա նույնքան էլ հին է Ուրարտուի տոպոնիմիկայի ուսումնասիրությունը, որի ընդավառում գիտությունը զգալի առաջընթաց է ապրել։ Այդ առաջընթացի ճանապարհին, ինչպես տեսնում ենք, իր ուրույն տեղն ունի նաև ակադեմիկոս Մառը։

Н. Я. МАРР И УРАРТОВЕДЕНИЕ

Доктор ист. наук Н. В. АРУТЮНЯН

Резюме

В статье показан вклад Н. Я. Марра в изучение топонимики древневосточного государства Урарту. В частности, документально аргументируется справедливость следующих заключений ученого: 1) В *Абиани, Иркуаини* и *Уэрдаини* следует видеть не названия племен, а имена правителей каких-то стран (областей), царскими городами которых соответственно были Эдиа(ни), Ируйа(ни) и Ирдуа(ни). 2) Этнуни и Удури-Этнуни—совершенно разные географические единицы, первая из них локализуется начиная с района Сарыкамыша на западе вплоть до западных пределов Севанского озера, а также до Абовянского и Сисианского районов АрмССР на востоке, а вторая—в бассейне озера Севан и на сопредельных территориях. 3) Кумахахалн и Кумахалхи Сардуровской летописи, как и Куммух ассирийских клинописных и Коммагена античных источников в долине реки Евфрат, тождественны. Имя царя этой страны, Кушташпили Сардуровской летописи, совпадает с Кушташпи анналов Тиглатпаласара III. 4) Тождественны также область Кулха Сардуровской летописи, Колхида античных, Колхети древнегрузинских и Кохкис древнеармянских источников. 5) Область Абилиани урартских клинописных источников совпадает с древнеармянской провинцией Абегеанк, локализуемой у верховьев реки Аракс. 6) В городе Анаше урартской клинописи следует видеть прототип современного Алашкерта у верховьев Арацани, к северо-западу от Каракёсе.